ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

«20» 01 2022 թ.
№ 23/04-23/1231

ք. Երևան, Տերյան փող., 44, Հեռ.՝ (+374 11) 518 401
Էլ. փոստ՝ kentron@yerevan.am

«ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերությանը
/ք. Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ., 8 շ. բն. 118բ/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

/պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ/

Երևանի քաղաքապետարանի և «ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2021 թվականի օգոստոսի 23-ին կնքվել է հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/53 կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր /այսուհետ՝ նաև Պայմանագիր/, որի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի մայթերի հիմնանորոգման աշխատանքները /այսուհետ՝ նաև աշխատանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը

/ներառյալ օրացուցային գրաֆիկը/, կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին, կապալառուի կողմից խախտվել է պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ընդհանրապես չեն կատարվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4 կետով, միակողմանի լուծում է «ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2021 թվականի օգոստոսի 23-ին կնքված հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/53 կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիրը:

ԱՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Իրավաբանական բաժին
Կատարող՝ Ա. Մարտիրոսյան
☎ 011-518-419 E-Mail: kentronirav@mail.ru